ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/36

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.02.2022թ. թիվ 26/26-1/1941-2022 գրությամբ Ա/Ձ Ռեբեկա Ռաֆիկի Բալոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 27.01.2022թ. թիվ 1/18-2/5626-2022 գրության հիման վրա, 04.02.2022թ. թիվ 26/26-1/1941-2022 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Ռեբեկա Ռաֆիկի Բալոյանին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Ա/Ձ Ռեբեկա Ռաֆիկի Բալոյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Ա/Ձ Ռեբեկա Ռաֆիկի Բալոյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Ռեբեկա Ռաֆիկի Բալոյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/36 ընթացակարգի շրջանակներում 09.02.2022թ. ժամը 09:32-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 27.01.2022թ. թիվ 1/18-2/5626-2022 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար գրենական պիտույքների ձեռքբերման նպատակով ստեղծված ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/127-Ք ծածկագրով ընթացակարգին հայտ էր ներկայացրել «Ռեբեկա Բալոյան Ռաֆիկի» Ա/Ձ -ն:

Էլեկտրոնային աճուրդի միջոցով, սույն թվականի հունվարի 18-ի հանձնաժողովի նիստի համաձայն «Ռեբեկա Բալոյան Ռաֆիկի» Ա/Ձ-ի ներկայացրած հայտում արձանագրվել էր անհամապատասխանություններ և վերջինիս ծանուցվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: «Ռեբեկա Բալոյան Ռաֆիկի» Ա/Ձ-ի կողմից, սահմանված ժամկետում շտկում չի կատարվել:

Հիմք ընդունելով “Գնումների մասին” ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 42-րդ կետը, սույն թվականի հունվարի 20-ի հանձնաժողովի նիստի համաձայն «Ռեբեկա Բալոյան Ռաֆիկի» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է:

Հիմք ընդունելով կարգի 45-րդ կետի պահանջները՝ «Ռեբեկա Բալոյան Ռաֆիկի» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար Ձեզ եմ ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/36 ընթացակարգի շրջանակներում 09.02.2022թ. ժամը 09:32-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2022/36 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/36 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/127-Ք» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Ռեբեկա Ռաֆիկի Բալոյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Ռեբեկա Ռաֆիկի Բալոյանի կողմից ներկայացված հայտում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը հստակ նկարագրված չեն, մասնավորապես՝ 1, 2, 6-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում առկա են «առնվազն», «և/կամ», «նվազագույն» տերմինները, հստակ նկարագրված չեն չափսերը, որոնք առաջարկվող կոնկրետ ապրանքի նկարագրություն չեն կարող լինել:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.01.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Ռեբեկա Ռաֆիկի Բալոյանի կողմից շտկում չի կատարվել և որոշում կայացրել վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 04.02.2022թ. թիվ 26/26-1/1941-2022 գրությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 27.01.2022թ. թիվ 1/18-2/5626-2022 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված

դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: ***<u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: ***<u>Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:</u>***

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում, ներառյալ եթե սույն հրավերով նախատեսված է հայտի ապահովման ներկայացման պահանջ և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտով ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, սակայն սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել դրա բնօրինակը, իսկ գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

Այսպես, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է «ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/127-Ք» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Ռեբեկա Ռաֆիկի Բալոյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.01.2022թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Ռեբեկա Ռաֆիկի Բալոյանի կողմից ներկայացված հայտում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը հստակ նկարագրված չեն, մասնավորապես՝ 1, 2, 6-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում առկա են «առնվազն», «և/կամ», «նվազագույն» տերմինները, հստակ նկարագրված չեն չափսերը, որոնք առաջարկվող կոնկրետ ապրանքի նկարագրություն չեն կարող լինել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը eauction.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.01.2022թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Ռեբեկա Ռաֆիկի Բալոյանի կողմից շտկում չի կատարվել և որոշում կայացրել վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.02.2022թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/2253-2022 գրությամբ խնդրել է հայտնել ե՞րբ է Պատվիրատուի կողմից Ա/Ձ Ռեբեկա Ռաֆիկի Բալոյանին ուղարկվել արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցումը և ի՞նչ բովանդակությամբ, ինչպես նաև տրամադրել ծանուցման արտատպումը:

Նշված գրությանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.02.2022թ. թիվ Ն/26-1/2433-2022 գրությամբ հայտնել է, որ ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/127-Ք ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից «Ռեբեկա Բալոյան Ռաֆիկի» Ա/Ձ -ի n.k.arakelyan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեով ավտոմատ ծանուցման եղանակով 18/01/2022թ. ժամը 12:51-ին ուղարկվել է «Դիմում-հայտում շտկում կատարելու մասին» վերնագրով էլեկտրոնային ուղերձ նամակ (կցվում է):

Կից ներկայացված ուղերձ նամակի ուսումնասիրության արդյունքում հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Ընկերությանը 18.01.2022թ. ժամը 12:51-ին ուղարկվել է «դիմում հայտում շտկում կատարելու մասին» վերնագրով ծանուցում հետևյալ բովանդակությամբ.

«Հարգելի «Ռեբեկա Բալոյան Ռաֆիկի» Ա/Ձ,

Դուք դիմել եք ՀՀ-ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/127-Ք ծածկագրով,էլեկտրոնային աճուրդին, էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրել է էլեկտրոնային աճուրդի մասնակցության Ձեր դիմում-հայտարարությունը, որում նկատվել են հետևյալ

թերությունները. Կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել «Ռեբեկա Բալոյան Ռաֆիկի» Ա/Ձ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված փաստաթղթերը: Առաջարկում ենք գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները և ուղղված դիմում-հայտարարությունը ուղարկել համակարգի միջոցով»:

Այսպիսով՝ Կարգի 41-րդ կետով սահմանվում է՝ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ</u>՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: <u>Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Վերոգրյալ իրավական նորմերի մեկնաբանման և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուի կողմից չեն պահպանվել Կարգի 41-րդ կետով սահմանված իմպերատիվ պահանջները, ինչպես նաև իր իսկ կողմից կազմված հրավերով սահմանված պահանջները, այն է՝ ***<u>մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները</u>***, այսինքն՝ արձանագրելով անհամապատասխանություններ, Ընկերությանն ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն չեն նկարագրվել հայտնաբերված անհամապատասխանությունները, որպիսի ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել Ա/Ձ Ռեբեկա Ռաֆիկի Բալոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 04.02.2022թ. թիվ 26/26-1/1941-2022 գրությամբ Ա/Ձ Ռեբեկա Ռաֆիկի Բալոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**